ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄ

---------- 2026 թվականի №----- -Ա

«ՅՈՒՔՈՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՅՈՒՔՈՄ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2026 թվականի ապրիլի 27-ի №1052 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ ներկայացնելով Ընկերության նկատմամբ հսկողության փոխանցումը համաձայնեցնելու հայտ (այսուհետ՝ Հայտ), որի համաձայն՝ Ընկերությունը նախատեսում է իր կանոնադրական կապիտալի ավելացման համար թողարկել հասարակ բաժնետոմսեր և տեղաբաշխել միայն գործող բաժնետերերի միջև՝ միայն բաժնետերերի նախապատվության իրավունքի շրջանակներում: Ընկերությունը նշել է, որ բաժնետոմսերը թողարկվելու և տեղաբաշխվելու են այն տոկոսային հարաբերակցությամբ, որ եթե յուրաքանչյուր բաժնետեր օգտվի իր նախապատվության իրավունքից ամբողջությամբ, ապա կպահպանի գործող բաժնետոմսերի նույն տոկոսային շեմը ներկայիս կանոնադրական կապիտալում: Բոլոր բաժնետերերի հետ ձեռք է բերվել նախնական համաձայնություն՝ նշված գործընթացն իրականացնելու համար, բացառությամբ՝ Ընկերության բաժնետերեր Հայկ Եսայանից և Ալեքսանդր Եսայանից: Ուստի, Հայտը ներկայացվում է այն կանխավարկածով, որ նշված բաժնետերերի կողմից իրենց նախապատվության իրավունքից չօգտվելու դեպքում՝ տոկոսային հարաբերակցության փոփոխություն տեղի կունենա: Եթե որոշ բաժնետերեր չօգտվեն իրենց նախապատվության իրավունքից, ապա Արամ Խաչատրյանի տոկոսային հարաբերակցությունը Ընկերության կանոնադրական կապիտալում կլինի առավելագույնը 25.716109%: Եթե Հայկ Եսայանը և Ալեքսանդր Եսայանը օգտվեն իրենց նախապատվության իրավունքից մասամբ, ապա Արամ Խաչատրյանի՝ Հայտով

նախնական կանխատեսվող տոկոսային հարաբերակցությունը ձեռքբերման համապատասխան չափով կնվազի: Ուստի, համաձայնությունը Ընկերությունը հայցում է Արամ Խաչատրյանի առավելագույնը 25.716109% չափով Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցության համար: Որևէ այլ բաժնետիրոջ կողմից իր նախապատվության իրավունքից չօգտվելու կամ մասնակի չօգտվելու այլ սցենար չի կանխատեսվում,

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանն (այսուհետ՝ Նախարարություն) ուղղված՝ Հանձնաժողովի 2026 թվականի մայիսի 6-ի №ՄՄ/34.2-Մ2-8/2377-2026 գրությանն ի պատասխան՝ Նախարարությունը 2026 թվականի հունիսի 10-ի №01/11.1/4110-2026 գրությամբ հայտնել է, որ Ընկերության նկատմամբ հսկողության փոխանցումը համաձայնեցնելու Հայտի վերաբերյալ իր իրավասությունների շրջանակում առարկություններ չունի՝ գրությանը կից ներկայացնելով Հայտի առնչությամբ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության դիրքորոշումը,

գ) Հայտի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բացակայում են «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ գործարքի կնքման համաձայնեցման մերժման հիմքերը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 9-ի №56-Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Հայտով ներկայացված պայմանների համաձայն՝ Ընկերության նկատմամբ հսկողության փոխանցմանը, որի արդյունքում՝ Ընկերության կանոնադրական կապիտալում Ընկերության մասնակից Արամ Խաչատրյանի մասնակցությունը կկազմի առավելագույնը 25.716109%:
2. Սահմանել, որ Հայտով ներկայացված պայմաններով Ընկերության նկատմամբ հսկողության փոխանցումը կարող է իրականացվել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ վեց ամսվա ընթացքում:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ, սույն որոշման 1-ին կետի համաձայն հսկողության փոխանցումից հետո երկշաբաթյա ժամկետում, անհրաժեշտ է

Հանձնաժողով ներկայացնել դրա վերաբերյալ համապատասխան հիմնավորող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները):

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ.ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան

-- ---------- 2026թ.